ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ՏԱՎՈՒՇԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПЫБЛИКА АРМЕНИЯ
ТАВУШСКАЯ ОБЛАСТЬ
ТАВУШИ АМАЙКАПЕТАРАН

REPUBLIC OF ARMENIA
TAVUSH REGION

4205, ՀՀ Տավուշի մարզ ,գյուղ Տավուշ 1փող. թիվ 31, РА Тавушская область,село Тавуш,
RA Tavush region, gyux Tavush , 1 pox. tiv 31
հեռ. tel. phon./0267/ 6 33 10 E- mail : tavush.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10 - Ա

ՏԱՎՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28.02. 2017Թ. ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ

## ՏԱՎՈՒՇԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով և <<Իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1 կետով

Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել 2017 թ. Տավուշի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 1-ի:.
2. Տավուշի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկ շաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:
3. Սույն որոշման առաջին կետը ուժի մեջ է Տավուշ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:
4. Ուժը կորցրած ճանաչել Տավուշ համայնքի ավագանու 16.01.2017 թ. թիվ 1 -Ա որոշումը:

Ավագանի - կողմ ՝7 դեմ 0 ձեռնպահ 0

Գրիշա Արզումանյան
Վարուժան Գրիգորյան
Արթուր Ադամյան
Զավեն Արզումանյան
Պավել Գյուրջինյան
Նոր-Այր Մուրադյան
Հեղինե Քալանթարյան

ՏԱՎՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ / Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ